

հեն: Անոնք (հայերը) չափ լաւ կը հասկնային թուրքերը»⁽⁷⁵⁾: Դրժ-
րախտարար Մեծ Աղէտը ցոյց տուաւ որ մեր բմրոնեմը թուրքերուն
մասին գլխաւորաբար կը կայանար ստորագնահատման մէջ անոնց ա-
նողայ վայրագութեան: Նոյն ատեն կ'երեւայ թէ թուրքերը երբեք
չէին ճանչնար հայերը, մոռցան այն ահաղին տնտեսական, արուես-
տագիտական, մշակութային նպաստը որ հայերը կը բերէին իրենց
փրտած կայսրութեան: Թրքական անմտութեամբ, եւ միայն իրենց
դապնային բնազդներէն տարուած, կ'երեւի չունենալով ուրիշ բը-
նազդ, սարսաղեցիկ այլ իրենց բնական վայրագութեամբ սպաննե-
ցին երկրին լաւագոյն ուժը: Օտար մը, 1924ին թուրքիա այցելու-
թեան ատեն կը գրէ. «Գորգի ճարտարարուեստը ծանր կերպով հար-
ուածուած է, որովհետեւ կորսնցուցած է տնային նարհատաւորները,
մեծ մասամբ հայերը»⁽⁷⁶⁾: Յունաստանի գորգերու պաշտօնատան նա-
խագահ Պ. Փալիս կը վկայէ. «Թուրքիոյ մէջ գորգի զծագրիչները
եւ բանուորուհիները նախ հայեր էին, յետոյ յոյներ, իսկ մահմե-
տականները երրորդ կարգը կը գրաւէին»⁽⁷⁷⁾:

Թուրքիոյ մշակոյթին ծանօթ հայ մը, Տիար Արմենակ Սաղը-
ղեան կը գրէր. «Հայերը գորգերու ամէնէն ճարտար հիւսողները մը-
նացած են թուրքիոյ մէջ, եւ ժառանգականութեան մեծ բաժին մը
կը գտնուի ազահովապէս իրենց բնդունակութեան մէջ»⁽⁷⁸⁾: Տր. Ռ.
Մ. Ռիֆսդալ, Նիւ Եորք Համալսարանի ուսուցիչներէն եւ Մերձաւոր
Արեւելքի մշակոյթի ուսումնասէր, 1925ին ուսումնական նպատակով
թուրքիա կ'այցելէր եւ յետոյ կը գրէր. «Մետաքս գորգերու ճար-
տարարուեստը տուժեց Հայոց արտագաղթին պատճառաւ, որոնք Կե-
սարիոյ գորգահիւսներուն նկատելի մասը կը կազմէին»⁽⁷⁹⁾: Եւ կա-
ւելցնէ. «1922 Օգոստոսին Յոյները պարտուեցան (Փոքր Ասիոյ մէջ),
իրենց նահանջին յաջորդեց բնակչութեանց փոխանակութիւնը: Յոյ-
ներու ամբողջութիւնը եւ Փոքր Ասիոյ Հայոց մեծագոյն մասը, Յու-
նաստան կամ այլուր բնակավայր փնտռեց: Հայրենագաղթ եղողնե-
րուն մէջ կային բազմաթիւ գորգագործներ: Եւ նշանակելի փաստ է
որ Յունական գորգեր կ'երեւան Նիւ Եորքի հրապարակին վրայ:
1924-ին 2,000 ոստայններ կը գործէին Յունաստանի մէջ: Այս ոս-
տայններուն մեծագոյն մասը Անատոլիցի հիւսողներու կողմէ կը բա-
նեցուէին: Թուրքիան կ'աշխատի նոր ձեռքեր վարժեցնել նախորդնե-
րուն տեղը գրաւելու համար»⁽⁸⁰⁾: Ես կը խորհիմ որ այս տողերը
իրենց տողընդմէջ ակնարկութիւններով խիստ պերճախօս են: Աւե-

(75) Oriental Rugs. p. 88.

(76) Modern Turkey. — Eliot Grinnell. — N. Y. 1924, p. 332.

(77) La Messagère d'Athènes. — «Գորգերու արուեստը զարեւու բնթացքին».
Թիւ 19:

(80) «Անահիտ», Գ տարի, Թիւ 5-6, էջ 78:

(81) Good Furniture Magazine, 1926, Jan. p. 16.

(82) Անդ, էջ 20: